

հետախիսից: Որովհետեւ Սինոդը, իբրեւ հոգեւոր հիմնարկութիւն, իրաւունք չունի առողջապահական բժշկական սահմաններ մտնելու եւ կարգադրութիւններ անելու, կանոններ տալու: Եւ վերջապէս ո՞ր իրաւամբ կարող է Սինոդ բժիշկներին պարտաւորացնել վկայականներ տալու: Յայտնի է, որ օրէնքի մէջ նախատեսուած են բոլոր այն պարագաները, որոնց մասին բժիշկները պարտաւոր են վկայականներ տալու: Այդ պարագաների թւում չկան ամուսնացողներին՝ հոգեւոր իշխանութեանը ներկայացնելու համար՝ առողջութեան վկայականներ տալու պարտաւորութիւնները: Երեւակայեցէք, որ չլրջին բժիշկները (հայ թէ օտարազգի) իրենց պարտաւոր չեն համարում այդպիսի վկայականներ տալը եւ ծխատէր բանաստեանն էլ իրենց իրաւունք չ'են համարում առանց այդպիսի վկայականի պատկ օրհնելը: — Ինչ անի պատկողը: Եթէ մեր եկեղեցու մէջ կան նոյն իսկ կրօնական սահմանումներ, որոնց էականն են ներքինը առողջապահական է, դրանք վարդապետած ու կառուցած են հոգեւոր իմաստներէ վրայ ու կրօնական վարդապետներին տակ, այլ ոչ այնպէս զուտ ու բացարձակ աշխարհիկ են, ինչպէս Սինոդի վերջին կարգադրութիւնը: Թրեհեւ դիտմամբ կապած են ամուսնայուծական խնդրի հետ, որ իրենց իրաւունք համարեն վկայականի կամ այլ պահանջ սահմանելը: սակայն այդ էլ կարող կապել. բանն որ, ինչպէս վերը յիշատակեցինք, վերահսկան հիւանդութիւնը իբրեւ հիւանդութիւն չէ, որ դառնում է պատճառ ամուսնայուծութեան, այլ իբրեւ ապացոյց ամուսնական անհաւատարմութեան:

Ուստի եւ մարդաբէ չպէտք է իննել գուշակելու համար, որ այդ նոր օրէնքը, ամուսնացողներին բժշկական վկայական պահանջելու կանոնը՝ կը մնայ անգործագրելի եւ ինքնին՝ կը հանդիսանայ միայն վկայական մեր սինոդականաց բարի ցանկութիւնների ու ժողովրդասէր ձգտումների:

Մ. ա.-ք. ՄԵՆԵԱՆ

24 Յուլի, 1305 թ. Պարիզ

Յ. Գ. Սյւ յօդածը «Անահիտ» յի համար էի պարտաստել եւ յղել էի արդէն խմբագրութեան, երբ պատահմամբ ձեռքս ընկաւ «Բիւզանդիոն» թերթի համարները, ուր նոյն խնդրի մասին վերջին գովեստներ ու դիտողութիւններ: Ուստի ի նկատի ունենալով որ «Անահիտ» զրկւած է թուրքերի մտնելու դիւրութիւններից, կարեւոր համարեցի յօդածին պատճէնն ուղարկելու «Բիւզանդիոն» ի խմբագրութեան, եթէ յարկար կը գտնի, հրատարակելու եւ իր էջերի մէջ: «Բիւզանդիոն» տպել էր այն N 2544 համարում եւ յայտնի թւին մէջ՝ նշիքն էր իր կողմից առանձին «Խորհրդածութիւններ», համարելով իմ դրածը՝ «կրկին ու կրկին կարգացուցուած արժանաւոր յօդուած»:

Նոյն

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ֆարմանի Ասմանի^(*)

Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ե Ց

Յեռեքիմ ՄԱՔԷԼԵՐ

Կուրդալ(1) զքուդքն(2) աղբիսն(3) Ֆարմանի եւ գրե պատասխանի դստեր քազաւորին այսպիս.

Անտես կամիս ինձիկ կուսն ցուցանել,
Որ չեմ տեսեր աչօքս ոչ սրտէս խորհել,
Ոչ ի քուս հրազիս ինձիկ գուշակել,
Եւ ոչ բանիդ գիտակ եւ ոչ նետուել:

Չը կայ ինձիկ միղք դու ինձի մեղադրել,
Կամիմ կամօքս, սիրտս է(4) ինձ ցանկացել.
Աչերս ի քո սրտէս է ինձ նայեցել,
Չիմ տեսն առանց ինձիկ յիսնէ գողացել:

Գիտեմ որ դու այլ գեղեցիկ ես աղվոր,
Գեղով եւ պատկերով չնրօճ փառաւոր,
Չերթ անըման ճօճար աչերն լուսաւոր
Որ չի կայ ինչ երկիր քո պէս հանց աղվոր:

Գոված ես հանց երկրի որ ես լրեսցի,
Թէ չէ դու ես յինէն անտես 'ւ աշխարհի.
Ես այլ շատ ցանկացայ սրբառի յօժարի,
Ոնց որ դու գիս տեսար ես բըքեղ տեսի:

Ամ թէ մարդ զբտանէ հընար եւ կամ ճար
Որ քո սէրդ իմ սրբոխ իննարի սազկար,
Նա իմ սրբոխ է կամ եւ հողուս յօժար,
Որ զիմ տեսս ի բեղիկ զքոյդ ինձ կամեցար:

Բայց ես ի յերկուղէ մեծ թագաւորին
Չի կամիմ որ իմ սրբոխ կամըն կատարին.
Ապա թէ որ ուզես զծածուկըն սրբախ,
Կամիս զարկեսն հեղուլ տալ թագաւորին:

(*) Տես Անահիտ, 1904 թ. 11 է. Գ. Ֆ. Մարտի որոշած ըլլալով առանձին հատորով ի լոյս ընդայն «Ֆարմանի Ասման» ի ֆրանսերէն ծարգմանումիւնը, մենք պիտի հրատարակենք միայն հայերէն բնագիրը:

(1) Ձեռ. մէջ՝ կարդալ: (2) Ձեռ. մէջ՝ զբուխքն:

(3) Ձեռ. մէջ՝ աղլիսն:

(4) Ձեռ. մէջ՝ սիրտս է ինձ.

Հազար ամանաթ տամ զեմ հոս դարիպ եմ,
եւ օտար աշխարհէ հեռատանէ եմ,
Շատ հարաթ մանկութեան սրբոով սիրել եմ,
Մի՛ ինձ պատճառ լինար, զիտ կատարեալ չեմ:

Թէ դու սիրով սրտիս ի յիս ի տես դաս,
նա զիս յիմ արեւուս շուտով հանել տաս,
Այդ քեզ մեծ վրնաս է եւ մեղք եւ կուռնա՜,
Որ ըզք սրբոյն կամքն մէն կատարել տաս:

Հանց մէկ պահու կենացդ որ ուտես շաքար,
նայ շատ տարին ըզխանջըն մի՛ մոռնաւոր,
Ըզք սիրտդ շահիս զինն առնես ազար,
Այլոց վատ կամենա քո սիրուք համար:

Թէ բանս որ ես կ'ուտեմ սրբոյն յօծար է,
եւ չես ի հաւանել թէ այդ մուհու է .
Գիտեմ որ չես գիտուն խելքդ կրնկան է,
Ի մընջալին սիրուն հարաւս եւ խեւ է:

Թէ սէր կայ քեզ արեւի մօտ ի յիս,
Թէ չէ՛ նա դալ առ լիւզ չէ յօծար սրտիս .
Թէպէտ ի գտա առ իս եւ կու սիրես զիս,
Հանցեղ արեւի մօտ յիս չիմանայ մարդ տաւրն-
վորիս:

Յարման մանուկիս այս հուզալ գրելիցի,
Շահիշապնութիւնդ քաջխուս իւրիւնցի,
Գո գալըդ յիս ի մօտ խնդումն է սրբոյ,
Բաց շատ ա՜ն կայ ինձիկ, վասն այն կու վախի:

(Դարունակելի)

ՏԻԿԻՆ, ՄԻԲԱՆՈՑԻՆ ԳՈՐԵՆԱՆԸ

Թիֆլիսի Հայոց Կրթամարտական Ընկերութիւնը որոշած է Ապրիլի 5ին Թիֆլիսի մէջ տանել Տիկին Միրանդայի բնամայն երեսնամայ գործունէութեան յօրինանք: Անտարազոյս են որ բոլոր Հայերը որ գնդարուեստը կը սիրեն և զիսեն Քէ ինչ Ծանկաղին ծառայութեանը մատուցա՜ն է Տիկին Միրանայ հայկական բնիկը, պիտի փութան այս առթիւ յայտնել մեր աշխարհաւ որ արուեստագիտութեան իրենց յայտնին ու կրթասիրտութիւնը: Ենթադրական ուղեքի՜, հետաքրքիր կամ նոր պէտք է ուղարկել Կրթամարտական Ընկերութեան նախագահին, Princesse M. Toumanian, Rue Bariatinsky, N. 8, Tiflis:

Մեր յառաջիկայ Ծիւղով պիտի նշատարակենք Տիկին Միրանայի բնամայն գործունէութեան մասին յօդուած մը զոր վերջին պահուն սասցանք Բաղդէն:

digitised by

ՔԱՐՈՒԼԻԿ ԵԿԵՂԵՑԻՆ

եհ

ՏԻՐԱՆՍԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ

է.

Հոռոճական-պապական եկեղեցին ամէն զերուրթիւն ունէր կազմակերպուեցաւ այնպէս, ինչպէս պահպանուեմ էր ակտարախական հոգին: Ոչ ոք էր խանգարողը: Չկար ո'չ կողքին եւ ո'չ զլիսին աշխարհիկ իշխանութիւն: Սա ինքն էր մի ժամանակ ամբողջ եւրոպային հրամայողը, իշխաններին թագեր բաժանողը, թագակիրներին գահինկեց անողը եւ ռաբբոյիկ՝ վանքերի գննդին կանգնեցողը:

Եւ պահն իր այս միանեման եւ անկուպար իշխանութիւնը պակեց Աստուծոյ փոխանորդութեան եւ անխաղաղակեցութեան աստիճանով ու տիպարով: Մի պաշտօն եւ յատկութիւն, որ ոչ մահկանացու ծնուածք թաշուեց իրեն վերադրելու եւ ոչ՝ « ազատութեան, հաւասարութեան ու երրայրութեան » պաշտօնէութիւնը՝ ամաչեց դաւանել եւ բնորոշելու: Պապը հանդիսացաւ մի նոր Նաբոլեոնոս, պաշտուած ու երկրպագուած իր արձակած հրամաններին ու պատուէրներին մէջ: Եւ քանի՜ տամեակ հազար Ռեզալանդ, Միաքանդըն ու Արեգնազդներ այրուեցին, խողովուեցին խարոյկների ու բոցերի մէջ, մարտեցին ու փնացան բանտերի մէջ, գալարուեցին ու անչնչացան տանջանքների ու զօրեղանքին մեղսանքների տակ . . .

Պապական-թաթիլիկ եկեղեցու հոգին՝ երկնային ու երկրային կաթիլերի մի տեսակ նաւորումն է, հիմնուած երկու առաքնայնների՝ Յիսուսին երկոյս ուրացող, Յիսուսին սիրելու մէջ երկոյս կապակածիկ Պողոսի եւ Յիսուսի վարդապետութեանը՝ « ամենայնի հետ ամենայն » լինելու գիւրթակերութիւնը տուող Պողոսի մարմնակն թաշուրթիւնի վրայ:

Պողոսն ունէր իր ձեռքին երկուային արքայութեան թախարին, պապը զարնով չբաւականացած՝ առաւ իր ձեռքը եւ մարդկանց սրտերի թախարին ա'յս աշխարհի մէջ:

Պապն ունէր տատանող սիւլական բնութիւն, պապը հանդիսացաւ ու մոռց անտալական:

Պապն մարդկանց տաւջ ուրացաւ իր Տիրոջը եւ դանդաղան զղկոյց. պապը մարդկանց առաջ դաւանեց Տիրոջը, իսկ գործով ու հոգով ընդ միշտ ուրացաւ. ու զղկալու մասին բնաւ չմտածեց:

Պողոս նեղ պարագաներում Աստուծոյ օգ-

A.R.A.R.®